ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 06» «նոյեմբերի » 2018թ.**
ժամը 11:00

1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Դ. Շոլև)

1.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի hmc_snto@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 25-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ՝ Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսանը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչը գերազանցում է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ ենթակետով նախատեսված սահմանաչափը՝ ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Դ. Շոլև)

3.1. Հիմք ընդունելով կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ առաջարկել առաջին տեղն զբաղեցրած Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսանին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց հարկային պարտավորությունների մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրված անհամապատասխանությունը՝ ինչը կարող է շտկվել Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսանի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, կամ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

3.2. Հանձնաժողովի քարտուղարին՝ ծանուցել Ա/Ձ Ռասուլ Ռահիմի Մաջդի Հասսանին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և ճշտված տեղեկատվությունը ներկայացնել hmc_snto@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Դ. Շոլև)

4.1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2018 թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 10:00-ին՝ք.Երևան, Չարենցի 46,4-րդ հարկ,46 սենյակ:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Դ. Շոլև

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Հայրապետյան

_____ Ա.Մարգարյան

Քարտուղար՝ _____ Շ.Ավագյան